ՀՏԴ 316:378.14

Է.Ա. ԿՅՈՒՐԵՂՅԱՆ, Ս.Գ. ՄԱՆԹԱՇՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Դիտարկվում են բուհում «Սոցիոլոգիա» առարկայի դասավանդման հարցերը: Հիմնավորվում է ներկա պայմաններում աշխատանքային գործունեության սոցիալական հիմնախնդիրների լուսաբանումը ճարտարագիտական բուհում:

Առանցքային բառեր. սոցիոլոգիական մշակույթ, սոցիոլոգիա, աշխատանքային գործունեություն, արտադրական սոցիոլոգիա, կառավարման սոցիոլոգիա:

Գիտությունը մարդուն և մարդկությանը բանական, իմաստալից ու բարոյական ապրելակերպին հաղորդակից դարձնող առավել կարճ ուղիներից մեկն է: Հազարամյակների պատմության ընթացքում հայ ազգը ստացել է ինքնատիպորեն ու արժանապատվորեն ինքնահաստատվելու եզակի հնարավորություններից մեկը: Սույն համատեքստում հայաստանյան ներկա զարգացումները կենսականորեն անհրաժեշտ են դարձնում հասարակական կյանքի գիտական համակողմանի և մշտապես կատարելագործվող ուսումնասիրությունները: Դրանք բնորոշ են քաղաքացիական ազատությունների «կրիտիկական» բարձր լիցք պարունակող սոցիալական իրականությանը և հնարավոր են միայն սոցիոլոգիական բավարար մշակույթի առկայության դեպքում: Մինչդեռ, եթե գնահատենք իրատեսորեն, հայաստանցիների սոցիոլոգիական մշակույթը (այն է՝ հասարակական կյանքի օրինաչափությունների հանդեպ գիտակցված պահանջարկ և սոցիոլոգիական տեքստի ըմբռնման նվազագույն մակարդակ) ցանկալի աստիճանի չէ: Դեռևս բազմաթիվ իրադրություններում, երբ հարկ է դրսևորել մտքի ճկունություն, բարոյական պատասխանատվություն այն պարագայում, երբ բացակայում է հավաստի գիտական տեղեկույթը, երբեմն նույնիսկ պաշտոնական բարձր կարգավիճակ ունեցող անձինք հակված են իրենց սուբյեկտիվ դատողությունները մատուցելու որպես օբյեկտիվ ճշմարտություն: Այս երևույթից խուսափելու համար անհրաժեշտ են տևական և նպատակաուղղված ջանքեր հանրության գիտակրթական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Դա առաջին հերթին վերաբերում է բարձրագույն կրթությանը:

Այսօր տարբեր բուհերում բացվել են սոցիոլոգիական մի շարք մասնագիտություններ: Տասնյակից ավելի հին ու նոր բարձրագույն կրթօջախներում դասավանդվում են «Սոցիոլոգիա» առարկան կամ նրա տարբեր ճյուղերը [1]: Հայաստանը յուրովի ներառված է աշխարհաքաղաքական այն բարեփոխումների մեջ, որոնք պետությունների և քաղաքակրթությունների հարաբերություններին հաղորդում են նոր

որակ և պահանջներ: Մասնավորաբար, Հայաստանը սոցիալ-տնտեսական, քաղաքական և կրթական ոլորտներում իրագործում է այնպիսի բարեփոխումներ, որոնք թելադրված են եվրոպական ընտանիքին, նրա կրթական համակարգին ներդաշնակվելու և 21-րդ դարի մարդու ճանաչողական ու կենսական կարիքների բավարարման պահանջներով: Այս ամենից բացի, դա նշանակում է նաև միջազգային չափանիշներով մրցունակ արտադրության ստեղծում, եվրոպական ցանկացած կրթօջախում ուսումը շարունակելու իրավունք և կարողություն: Սա էլ բուհական կրթությանը ստիպում է նորովի իմաստավորել ապագա մասնագետների հումանիտար որակները, կենսական շարժառիթները: Այսինքն՝ այն, ինչը ցանկացած ուսումնական պլանում կարևորում է նաև մասնագետի սոցիոլոգիական մշակույթի դերը: Եթե նախկինում տվյալ մշակույթը լավ թե վատ «ներառվում էր» տարբեր հումանիտար առարկաների ծրագրերի ենթատեքստում, Ներկայումս բուհերում այն իրագործվում է «Սոցիոլոգիա» առարկայի ծրագրում: Ըստ որում, ճարտարագիտական կրթության մեջ առանձնակի կարևորվում է նրա կիրառական կողմը [1-5]:

Ակնհայտ է, որ ճարտարագիտական կրթության մեջ առանձնակարգ նշանակություն ունի արտադրության ապագա ղեկավարների կառավարչական անհրաժեշտ գիտելիքների և կազմակերպչական հմտությունների զարգացումը: Տվյալ խնդիրը փոխլրացնելով լուծում են թողարկող ամբիոնները, ինչը սակայն ունի սահմանափակ հնարավորություն: **Առկա բացը պետք է լրացնի հումանիտար կրթաբլոկը, որը, ներկա պայմաններում ձգտում է ներդաշնակվել իրացվող բարեփոխումների համատեքստին**: Մասնավորապես, դրան նպատակաուղղված է եղել ՀՊՃՀ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի ամբիոնի վերջին տարիների գործունեությունը: «Փիլիսոփայություն» դասընթացի առարկայական ծրագրում սոցիոլոգիական թեմատիկայի ներմուծումը, վերջինիս մեջ արտադրական սոցիոլոգիայի հիմնահարցերին անդրադարձը ժամանակի ընթացքում պայմանավորեցին այն հանգամանքը, որ դասընթացը վերանվանվեց «Փիլիսոփայություն, Սոցիոլոգիա», որն էլ դասավանդվում էր բուհի բակալավրական կրթական ծրագրի բոլոր մասնագիտություններով մինչև 2014 թվականը: Կարևոր է ընդգծել, որ առարկայի սոցիոլոգիական բլոկում առաջնակարգ դերը տրված էր նրա կիրառական կողմին:

Որտեղ էլ աշխատի ապագա մասնագետը և ինչով էլ զբաղվի, մշտապես ներգրավվելու է համատեղ կյանքի «լաբիրինթոսի» մեջ: Նրա փոխօգտակար գործունեության մասշտաբները, ի վերջո, կենսական ցանկալի արդյունքները պայմանավորվում են կազմակերպչական, կառավարչական օրինաչափությունների իմացությամբ: Մասնավորաբար, արտադրական ստորաբաժանման կառավարման մեջ սոցիոլոգիական և հոգեբանական գործոնները հաճախ վճռական ազդեցություն ունեն աշխատանքի արդյունքների վրա: Դրա համար էլ **21-րդ դարի բարձրագույն կրթությամբ ճարտարագետը պետք է տիրապետի նաև տվյալ ոլորտի այն**

բոլոր գիտելիքներին, որոնք նրա ապագա գործունեության ընթացքում կնպաստեն արտադրության արդյունավետ կառավարմանը:

«Սոցիոլոգիա» առարկայի դասավանդման նպատակն էր մեկ կիսամյակի ընթացքում ուսանողներին ծանոթացնել սոցիոլոգիական գիտելիքի առանձնահատկություններին, սոցիոլոգիական հետազոտության կազմակերպման փուլերի, ծրագրի, տեղեկույթի հավաքման և վերլուծության մեթոդների, անձնավորության, հասարակական կարծիքի, աշխատանքի, կառավարման սոցիոլոգիայի նրբություններին և արտադրության մեջ դրանց օգտագործման հնարավորություններին: Դասընթացի յուրացման արդյունքում ուսանողը տեղեկանալու էր արտադրության մեջ, աշխատանքային հարաբերություններում սոցիոլոգիական գիտելիքի ձեռքբերմանը և կիրառման յուրահատկություններին: 32 ժամ նախատեսված դասընթացի շրջանակներում կարդացվող դասախոսությունները ինքնատիպ են նրանով, որ բացի ընդհանուր տեսական և կիրառական ճշմարտություններից, նրանցում արտացոլված են ամբիոնի դասախոսների, այդ թվում՝ և հոդվածի հեղինակների մշակումներն արտադրական սոցիոլոգիայի, կառավարման սոցիոլոգիայի և հոգեբանության ոլորտում՝ օրինակներ և հետևություններ սեփական հետազոտություններից [6-9]: Նման մոտեցումը խիստ կարևորվում է այն պարզ պատճառով, որ արտադրական կյանքը, ընդհանուր օրինաչափություններից բացի, ունի «մասնավոր և անկրկնելի բաղադրամաս», որի բացահայտումը և առանձնահատկությունների կիրառումը յուրաքանչյուր ինքնուրույն ազգապետական կրթական համակարգի խնդիրն է, գործող արտադրության արդյունավետության բարձրացման նախապայմանը [3]:

Ճարտարագետ-մասնագետի որակավորման կարևոր հատկանիշներից մեկն արտադրական որևէ գործընթացի կամ աշխատանքային խմբի գործունեության կազմակերպումն ու կառավարումն է, որտեղ մարդկային հարաբերությունների դերն էական է: Այդ պատճառով դասախոսություններում ներկայացվում են պաշտոնական և ոչ պաշտոնական հարաբերությունների, աշխատանքային միջավայրի սոցիալ-հոգեբանական մթնոլորտի բնույթը, բովանդակությունը, դրանց ազդեցությունը աշխատանքի որակաքանակական ցուցանիշների վրա: Ուսանողների մոտ հատկապես պահանջարկված են միկրոմիջավայրի սոցիալ-հոգեբանական մթնոլորտի յուրահատկությունների քննարկումները [2]: Եվ դա պատահական չէ, քանզի՝ «Ձեռնարկության ցանկացած հիմնախնդիր մարդկային ռեսուրսների հիմնախնդիրն է» [1]:

Մարդկությունը հարյուրամյակների ընթացքում հարուստ փորձ է կուտակել՝ շուկայական տնտեսության պայմաններում արդյունավետ աշխատանքի ապահովման հետ կապված: Արդեն ավելի քան քսան տարի է՝ նույն ուղին է բռնել Հայաստանը ի թիվս նախկին խորհրդային մյուս հանրապետությունների: Եվ, բնականաբար, ինչպես արտադրության, այնպես էլ կրթական ոլորտներում հարկ է վերա-

նայել խորհրդային այն ավանդույթները, որոնք վերաբերում են աշխատանքային մշակույթին, գործնական հարաբերություններում հաղորդակցության առանձնահատկություններին: Մանավանդ որ գիտությունը տվյալ ասպարեզում հսկայական առաջընթաց է ապրել, ինչը, սակայն, չենք կարող ասել նրա գործնական ներդրման մասին: Հետխորհրդային իրականության համար այսօր էլ՝ 21-րդ դարում, արդիական է հնչում 20-րդ դարի սկզբին արտահայտված Հենրի Ֆորդի թևավոր խոսքը. «20-րդ դարի համար առաջին հարցը մարդկանց հետ հարաբերությունները կարգավորելու կարողությունն է»: Այստեղ էական նշանակություն է ձեռք բերում գործարար հաղորդակցության խնդիրը: Այն, թե ուսուցման գործընթացում ապագա մասնագետը որքանով է նախապատրաստվում գործարար հաղորդակցմանը, գիտելիքների և հմտությունների ինչ պաշար է ձեռք բերում՝ կապված գործնական զրույցի անցկացման, խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման, գործարար վարվելակերպի հետ, մեծապես պայմանավորում է համատեղ աշխատանքի հաջողությունը: Սա թերևս առավել արդիական ու հրատապ է հենց ճարտարագիտական կրթության համար, որն ավելի քան կապված է ապագա Հայաստանի վերականգնվող ու նորացվող արտադրության հետ [10]:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ **Հայաստանի Հանրապետության ժամանակակից գիտակրթական բարեփոխումների համատեքստում ճարտարագիտական կրթության բոլոր մակարդակներում առաջնակարգ նշանակություն ունի հասարակական, նախ և առաջ արտադրական կյանքի օրինաչափությունների վերաբերյալ տեսական գիտելիքների յուրացումը, աշխատանքային միջավայրի ինքնուրույն սոցիոլոգիական վերլուծությունը, ճարտարագետի գործունեության արդյունավետության բարձրացման մեջ վերլուծության արդյունքների կիրառումը**:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Կյուրեղյան Է.Ա.** Կիրառական սոցիոլոգիա: Դասագիրք.-Եր.: Ճարտարագետ, 2015.- 468 էջ:
2. **Կյուրեղյան Է.Ա., Շամիրյան Վ.Մ.** Սոցիալ-հոգեբանական մթնոլորտը ձեռնարկությունում: Դաս. համառոտագիր. – Եր.: Ճարտարագետ, 2008.- 64էջ:
3. **Կյուրեղյան Է.Ա., Շամիրյան Վ.Մ.** Ձեռնարկության կառավարման սոցիոլոգիական հիմնահարցեր: Դաս. համառոտագիր. – Եր.: Ճարտարագետ, 2009.- 64էջ:
4. **Сарно А.А.** Социальные функции трудовой мотивации работоспособного населения // Социальные проблемы труда в современном обществе и вопросы совершенствования преподавания социологии труда в вузах: Сб. статей / Отв. ред. **А.О. Бороноев**. - СПб.: Изд-во СПбГУ, 1999. - С. 78.
5. **Тощенко Ж.Т.** Социология труда: Учебник.- М.: ЮНИТИ-ДАНА, 2008. -423 с.

6. **Կյուրեղյան. Է.Ա., Մանթաշյան Ս.Գ.** Կորպորատիվ մշակույթի մոտիվացնող դերը // Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) Լրաբեր: Գիտական հոդվածների ժողովածու. 3 մասով: – Եր.: ճարտարագետ, 2013. - Մաս 3.- էջ 837-842:
7. **Манташян С.Г., Кюрегян Э.А.** Мотивация трудовой деятельности как фактор жизнедеятельности вуза // Вестник: Сборник научных статей Государственного инженерного университета Армении.-Ер.: Чартарагет, 2014.- Часть 3.- С.744-749.
8. **Կյուրեղյան է. Ա.. Ավետիսյան Ա.Ս.** Երիտասարդ սերնդի արժեքային համակարգի փոխակերպումները // Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսահրանի Լրաբեր: Գիտական հոդվածների ժողովածու. 3 մասով: – Եր.: ճարտարագետ, 2015.- Մաս 3. - էջ 829-834.
9. **Манташян С.Г.** Мотивация трудовой деятельности молодежи // Вестник: Сборник научных статей Государственного инженерного университета Армении.-Ер.: Чартарагет, 2014.- Часть 3.- С.834-840.
10. **Կյուրեղյան Է.Ա., Շամիրյան Վ.Մ.** / Գործարար հաղորդակցում: Ուսումնական ձեռնարկ: ՀՊՃՀ.- Եր.: Ճարտարագետ, 2013.- 114 էջ:

Э.А. КЮРЕГЯН, С.Г. МАНТАШЯН

ОСВЕЩЕНИЕ СОЦИАЛЬНЫХ ПРОБЛЕМ ТРУДОВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В ПРОЦЕССЕ ПРЕПОДАВАНИЯ ПРЕДМЕТА ”СОЦИОЛОГИЯ”

Рассматриваются вопросы преподавания предмета “Социология” в вузе. Обосновывается преподавание социальных проблем трудовой деятельности в нынешних условиях.

Ключевые слова: социологическая культура, социология, трудовая деятельность, производственная социология, социология управления.

E.A. KYUREGHYAN, S.G. MANTASHYAN

ILLUCIDATING THE SOCIAL PROBLEMS OF LABOUR ACTIVITY IN THE PROCESS OF TEACHING «SOCIOLOGY»

Issues on teaching Sociology at a University are considered. The necessity of teaching social problems of labour activity under present conditions is conditioned.

Keywords: sociological culture, sociology, labour activity, production sociology, management sociology.